ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ո՞Վ Է ԱՊՐՈՒՄ

Շատ դարեր առաջ արևելքում մի փառատենչ իշխան է լինում: Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է:

... Մի անգամ հանկարծակի խուժելով մի հեռավոր իշխանության սահմաններից ներս, հասնում է երկրի մայրաքաղաքի փակ դռներին: Պաշարում է քաղաքը, բանակը զետեղում է ամրակուռ պարիսպների շուրջը, ինքն էլ նստում է արքայական վրանի մեջ՝ օր ու գիշեր հնարներ ու քաղաքին տիրանալու դավեր որոճալով:

... Մի օր իշխանը զորքի մեջ քննական պտույտ անելուց հետո վերադառնում է իր վրանը: Ճանապարհն անցնում է քաղաքի ընդարձակ գերեզմանատան միջով: Իշխանը քաշում է նժույգի սանձը, կանգ առնում և դիտում անծայրածիր գերեզմանները: Դիտում է ու խորհում իր սրտի մեջ:

... Հարկավ ամեն մի քարի տակ մի հանգած կյանք կա, մի մեռած անհատ, ներկա ապրող աշխարհից առաջ մի անցած ապրող աշխարհ:

... Գերեզմանոցում շրջելիս իշխանը իջավ ձիուց, մոտեցավ առաջին շիրմաքարին և կարդաց արձանագիրը. անուն, տոհմանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այս թվին, մեռավ այս թվին. չապրեց և ոչ մի օր:

Ինչ տարօրինակ խորագիր:

Կարդաց մի ուրիշը. – անուն, տոհմանուն, հռչակավոր զորապետ, միշտ հաղթանակ, ծնվեց, մեռավ, ապրեց միայն մի օր:

Իշխանը զարմացած շարունակեց ընթերցումը հաջորդ մահարձանի. – մեծափարթամ կալվածատեր, ծնվեց – մեռավ, ապրեց 7 տարի:

... Ավելի զարմացավ իշխանը և շիրմաքարից շիրմաքար անցնելով՝ կարդաց մի այլ արձանագիր. – անուն, ազգանուն, խորիմաստ հեղինակ, ծնվեց – մեռավ, ապրեց իր կյանքի բոլոր օրերը:

Իշխանը մտասույզ կանգ առավ. ինչ կնշանակե այս, ինչ խորհուրդ ունեն այս գրությունները: Մտածեց, մտածեց և անկարող եղավ լուծելու այս գաղտնիքը: Հրամայեց գտնել – բերել տեղացի մի մարդ՝ գիտակ այս առեղծվածին: Ցրվեցին թիկնապահներն ամեն կողմ և մի պահ անցած՝ բերին մի ծերունի մարդ, որ բնակվում էր գերեզմանի ծայրին՝ մի հյուղակի մեջ:

– Կարո՞ղ ես բացատրել ինձ տապանագրերի իմաստը, – հարցրեց իշխանը:

– Կես դար է,– ասաց ծերուկը,– դեգերում եմ այս մեռելաքաղաքի

բնակիչների մեջ: Այստեղ հանգչում են հայրերը և նրանց կողքին իրենց որդիները, իսկ թոռները հիմա մարտնչում են քո դեմ: Ես գիտեմ այս մեռելաքաղաքի գործերը – մահի և կյանքի առևտուրը: Կյանքն իր ծնված ժամից գրավ է դրված մահի մոտ: Մահը խիստ հզոր պարտատեր է: Ո՛չ հաղթապանծ իշխանը կազատվի այդ պարտքից, ո՛չ պարտված ստրուկը... Կյանքը սուտ է, միայն...

Իշխանը մեղմով կտրեց ծերունու խոսքը:

– Այո՛, այո՛, բայց խնդրում եմ ինձ մեկնես այս գրերի խորհուրդը:

Ծերունին մի պահ տրորեց ճակատը և խամրած ձայնով ասաց.

– Հնուց, դարերի մեջ սրբագործված մի սովորություն կա մեր քաղաքում: Երբ մեռնում է մի քաղաքացի, դատի են նստում քաղաքի իմաստուն ծերունիները: Քաջություն, խելք, հարստություն անարժեք են, եբր չի գործվում ուրիշի համար: Իրեն անձի համար ապրած օրերը նժարի մեջ կշիռ չունեն, բարիք գործած օրերն են ապրած համարում: Ուրիշի համար ապրողն է ապրում, որովհետև կյանքի իմաստը ուրիշի համար ապրելու մեջ է: Եվ այսպես հաշվում են ննջեցյալի բարիք գործած օրերը և թիվը գրում տապանի վրա:

... Իշխանը գոհացավ ծերունու խոսքերից, առատ վարձատրեց նրան և հետիոտն, գլուխը քարշ, դանդաղ քայլերով գնաց վրանը:

Ամբողջ գիշերը մինչև լույս նա առանձնացած գլուխն առավ ափերի մեջ, ո՛չ քնեց և ո՛չ հանգստացավ, մտածեց ու մտածեց: Երբ լույսը ծագեց՝ փոխանակ ռազմակոչ շեփոր զարկելու, կռիվը նորոգելու համար, նահանջի հրաման արձակեց:

Վերադարձավ իր երկիրը, բանակը ցրեց և ձեռնարկեց բարի և խաղաղարար գործեր՝ մնացած կյանքը ապրելով ուրիշների բարօրության համար»: